ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունվարի 22-ի նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Լուսինե Արմենի Հարությունյանի** համալսարանի ղեկավարությանն ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. Լ.Ա.Հարությունյանը 2009 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. 2009-2018 թթ. լեզուների ամբիոնի դոցենտ, 24.08.2018 - 31.01.2020՝ լեզուների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, 2020 թվականի հունվարի 31-ից՝ լեզուների ամբիոնի վարիչ՝ մրցույթով անցնելու կապակցությամբ: Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Լ.Ա.Հարությունյանը 2006 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2018 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Լ.Ա.Հարությունյանը դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում հրատարակել է 12 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (1 դասագիրք՝ երաշխավորված նախարարության կողմից՝ առանց համահեղինակների, 1 ուսումնամեթոդական ուղեցույց, 4 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում (այդ թվում 2-ը համահեղինակությամբ), 5 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում

(այդ թվում 1-ը համահեղինակությամբ), 1 թեզիս՝ տպագրված միջազգային գիտական ամսագրում՝ համահեղինակությամբ):

Լ.Ա.Հարությունյանը սկզբունքային, բանիմաց գիտնական մանկավարժ է, ունի մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակ, պարտականությունների նկատմամբ պատասխանատվության մեծ զգացում, մարդկային հատկանիշներ: Մշտապես աշխատում է իր գիտելիքների խորացման ուղղությամբ՝ գիտական գործունեության արդյունքները հասանելի դարձնելով ուսանողներին: Իր կատարած դրական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Լեզուների ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Լ.Ա.Հարությունյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Լուսինե Արմենի Հարությունյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 3-րդ գլխի 6-րդ կետի «ա)» ենթակետի 1-ին պարբերության պահանջներին, **Լուսինե Արմենի Հարությունյանին** շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ **«Բանասիրական գիտություններ»** բնագավառի **Ժ.02.07՝ «Ռոմանագերմանական լեզուներ»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունվարի 22
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունվարի 22-ի նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Քնարիկ Ավագի Այվազյանի** ղեկավարությանն ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Կ.Պ.Պետրոսյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. Ք.Ա.Այվազյանը 2016 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնում որպես ասիստենտ՝ համատեղության կարգով: Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա աշխատում է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության մակրոպրուդենցիալ վերլուծությունների և մոդելավորման բաժնում որպես վերլուծաբան:

Ք.Ա.Այվազյանը 2016 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում հրատարակել է 7 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (1 մեթոդական ցուցումներ, 6 գիտական հոդված, որից 4-ը՝ համահեղինակությամբ):

Ք.Ա.Այվազյանը ակտիվորեն մասնակցում է ամբիոնի աշխատանքներին, դասախոսությունները կարդում է ժամանակակից տնտեսագիտության պահանջներին համապատասխան: Իր կատարած դրական, արդյունավետ ու հոգատար աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Գյումրու մասնաճյուղի գիտական խորհուրդը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Ք.Ա.Այվազյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:
Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Քնարիկ Ավագի Այվազյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի «բ)» ենթակետի պահանջներին՝ **Քնարիկ Ավագի Այվազյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում՝ **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունվարի 22
Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունվարի 22-ի նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հրաչյա Աշոտի Ամիրջանյանի** ղեկավարությանն ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Մ.Լ.Աղալովյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. Հ.Ա.Ամիրջանյանը 2012 թվականի նոյեմբերի 12-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում որպես ասիստենտ (այդ թվում 12.11.2012 – 03.09.2018՝ համատեղության կարգով): Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Հ.Ա.Ամիրջանյանը 2008 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում հրատարակել է 5 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (4 մեթոդական ցուցումներ՝ համահեղինակությամբ, 1 գիտական հոդված՝ համահեղինակությամբ):

Հ.Ա.Ամիրջանյանը ակտիվորեն մասնակցում է ամբիոնի աշխատանքներին, դասախոսությունները կարդում է տեսական ու գործնական բարձր մակարդակով, վայելում է

պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը:

Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Հ.Ա.Ամիրջանյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հրաչյա Աշոտի Ամիրջանյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի «բ)» ենթակետի պահանջներին՝ **Հրաչյա Աշոտի Ամիրջանյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում՝ **«Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ»** բնագավառի **Ա.01.02՝ «Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունվարի 22
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունվարի 22-ի նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Արթուր Ժիրայրի Առաքելյանի** ղեկավարությանն ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Մ.Ս.Մելքումյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. Ա.Ժ.Առաքելյանը 2013 թվականի սեպտեմբերի 2-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնում որպես ասիստենտ: Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ա.Ժ.Առաքելյանը 2013 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Տվյալ բնագավառում նա հրատարակել է 18 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, որից 13-ը՝ թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո (1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 1 դասախոսությունների նյութեր, 4 կոլեկտիվ մենագրություն («Ամբերդ» մատենաշար), 6 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում (այդ թվում 4-ը համահեղինակությամբ), 1 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրում՝ համահեղինակությամբ):

Ա.Ժ.Առաքելյանը ակտիվորեն մասնակցում է ամբիոնի աշխատանքներին, դասախոսությունները կարդում է ժամանակակից տնտեսագիտության պահանջներին համապատասխան, վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը:

Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Ա.Ժ.Առաքելյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Արթուր Ժիրայրի Առաքելյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի «բ)» ենթակետի պահանջներին՝ **Արթուր Ժիրայրի Առաքելյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում՝ **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունվարի 22
Երևան